16. ՆԱԽՇՈՒՆ ՂՇԻ ՀԵՔԻԱԹԸ

Ժամանակով կէղնի չի էղնի մե թագավորմ։ էդ թագավորը մե շատ լավ սատանա վաղիրմ կունենա։ Ջար մարդիկ էդ վազիրի կողմեն դուքան գանգատ կէնեն թագավորին, թագավորն էլ կ'ոխակալվի ու կ'հանե վազիրին։

Հետո էն չարություն էնող մարդիկը նորեն մե ուրիշ վազիրմ կ'բերեն, թե. «էս լավ է», թագավորն էլ կ'ընդունե։

Էդոնք թող էդտեղ մնան, մենք էրթանք հին վազիրի քովը։

Հին վազիրն էլ զոր ու գիշեր կմտածեր, թե՝ ես սուչ չունեի, որ ինձի ղուա էրին։ Մե օրմ գնաց քաղքի ղրաղը ման գալու, ման գալած տեղը մե լավ, նխշուն ղշի ընբուլմ գտավ ու բերավ իրան տուն։ Էդ վազիրն էլ մե լավ, շնորհալի աղշիկմ ուներ։ Աղշկանը ըսավ թե.— էս ընբուլը պտի տանիմ թագավորին փեշքաշ։

Աղշիկը ըսավ.— Հայրի՛կ, մի տանի, էգտից քեզ վնաս կհասնի։

Նա ըսավ.— էս ընբուլը ի՞նչ է, որ իրան վնասը ինչ էղնի,— ու առավ գնաց դեպի թագավորը։ Տարավ թագավորին գլուխ տվավ ու ըսավ.— Թագավորն ապրած կենա, գու էս տեսակ ընբուլ տեսե՞լ էիր։

Նա էլ առավ ձեռն ու զարմացավ թե.— Հաստատ որ ես չէի տեսեր

Հ'ետև թոփ էղան թագավորի նախարարները ու զարմացան, թե էս ի՞նչ տեսակ գեղեցիկ բնբուլ է։ Էդտեղ թաժա վազիրն ոխակալվավ թե. «Մախսուզ էգ տեսակ բաներ կը բերե, որ նորից թագավորի աչքը մտնե ու նորեն իրան բերե էնե վազիր»։

Հին վազիրեն շնորհակալ էղավ թագավորը, ու նա գնաց իրան տունը։

Հ'ետև էկավ թաժա վազիրը թագավորի մոտ ու ըսավ.— Թագավորն ապրած կենա, դու հլա բնբուլն ես տեսե զարմանաս կը, հաբա օր դրա ղուշը տեսնիս ի՞նչ կէնես։

Ըսավ.— Ո՞վ կարա բերի։

Նա թե.— Հին վազիրդ օր բնբուլը բերեց, ղուշն էլ կը բերե։

Մարդ ղրկեց, հին վազիրին բերել տվավ ու ըսավ.— Կէրթաս, էս բնբլի տեր ղուշը կգտնիս բերես, թե չէ գլուխդ զարկել կուտամ։

Վազիրն ըսավ.— Թագավորն ապրած կենա, էդիկ մե բնբուլմ էր ընկած, գտա բերի, ես ղուշ ո՞րտից գտնիմ։

— Իմ գործս չէ, պտի գտնիս։

Վազիրն ելավ, տխուր-տրտում գնաց իրան տունը։

Աղջիկն ըսավ.— Հայրիկ, ինչի՞ ես էդպես տրտում։

Նա ըսավ.— Իմ դարդես վազ արի։

Աղշիկը թե.— Դարդդ ի՞նչ է, իմանամ։

Նոր հերը պատմեց, թե թագավորը սրա ղուշը գուզե։

Աղջիկը ըսավ.— Հ'պա ես օր ըսի թե մի տանի, վնաս կ'հասնի՞, ինչի՞ չլսեցիր, դեհ,— ըսավ,— ես քեզնեն ինչ օր գուզեմ, գնա թագավորեն ուզե։ Գնա ըսա. «Իրեք տարի ինձի ժամանակ տու, տարեկան էլ հազար եզ, ձի, բոլորն էլ ցորենով բառցած ու դրանց նոքարներն էլ հետը ու էդ բոլորն էլ վազիրի ծախսովը պտի էղնի, օր գտնիմ, բերեմ, թե չէ՝ չի էղնի»։

Թագավորը հրամայեց վազիրին թե.— Տես, ինչ որ հրամայն կը, գնա առ օր էրթա շուտով գտնի բերե։

Վազիրն էլ շատ փոշմնավ, համա ի՞նչ աներ, վախտը անցել էր, ճարը կտրած գնաց, առավ հազար եզ ու ձի, բոլորն էլ բառցեց բեռներով ու նոքարներով, քցեց ճամբա։

Գնաց աղջկան ըսավ.— Բերի։

Նա էլ ըսավ.— Որ էդպես է, գնա մե յաբանի, անմարդաբնակ տեղմ իջի, մե ջրի քով բեռների ցորենը ցրվել տու, ձիաններն ու եզներն էլ մորթե, ջանդաքները փռե, դավեն մորթե, փորը դարտկել տու, դու մտի դավի փորի մեջը ու սպասե մինչև ղշերու գալուն։

Ելավ գնաց բեռներին հասավ ու այնպես անել տվավ, ինչպես

օր աղջիկն էր ասել։ Մեկ էլ տեսավ, օր ղշերի ձենը էկավ։ Իմացավ օր էկան, ինքը գնաց մտավ դավի փորը, նոքարներն էլ պայ մտան։ Մեկ էլ տեսան ղշերը էկան երկնքի երեսը կայնան։ Էդ ղշերի թագավորն էլ էն բնրլի տերն էր, օր վազիրը դտել էր։ Էդ ղշի թագավորի նազիր վեղիրն էլ Գյուլն ու Բլբուլն էին։

Թագավորն ըսավ.— Գյուլ ու Բլբուլ էստեղ իջնինք, հաղր ջուրը կա, կուտը, ջանդակը։

Գյուլ ու Բլբուլն ըսին.— Էստեղ վտանգավոր տեղ կէրևի, վայ թե ինսանօղլի էղնին բեղի բռնեն, լավն էն է օր էստից էրթանք հեռանանք, մե ուրիշ յաբանի տեղմ իջնինք։

— Անցան ու գնացին, էդ տարին չհաջողվեց։

Մեկել տարին էլի էդ վախտը հին վազիրը գնաց մեկել վազիրի մոտ ըսավ.— Էլի էնքան ձի, եղ ցորեն ու ամեն պատրաստությունը տես, օր էս տարի էլ էրթանք։

Էլի առավ գնաց, տարավ էլի էնպես արավ, ինչպես օր առաջի անգամը արել էր։ Էդ անգամն էլ չհաջողվեց։

Մնաց ժամանակին մեկ տարի։ Գնաց էս անգամն էլ էլի վազիրն առավ ամեն պատրաստություն ու գնաց։

Առաջի տարին վազիր-նազիրը՝ Գյուլն ու Բլբուլն էին, իրանց թագավորին պրծացրին։ Երկրորդ տարին էլ Շհանն ու Լաչին էին՝ էլի չթողին օր իջնին, ըսին՝ էլի վտանգ կպատահի։

Երրորդ տարին օր գնաց, կուտը փոխեց, ջանդաքները մորթեց, դավի փորը թափեց, տարավ ջանդաքների օրթլաղը ու ինքը՝ վազիրը մտավ դավի-փորը։ Ետև ղշերը էկան, էկան ջանդքներու վերևը կայնան ու ղշի թագավորը ըսավ իրան նազիր վազիրին (էս անգամվա նազիր-վազիրն էլ Ղառզառն ու Ղուզղունն էին ջանդաք կոծող)[1] թագավորն ըսավ.— Ղառզառ ու Ղուզղուն էստեղ իջնի՞նք, թե չէ։

Նրանք էլ ըսին.— Թաղավորն ապրած կենա, հաղր էստից էլ լավ տեղ որտից կգտնիք, վեր գանք էստեղ, ջանդաք ուտող ղուշը թող ջանդաք ուտե, կուտ ուտողը՝ կուտը, դու էլ գնա էն մեջ տեղի բարձր տեղը, դավի վրա կայնի ու թամաշ էրա, մինչև մենք ուտենք, խմենք ու էլի երթանք։

Իջան ու սկսեցին ուտել։ Վազիրը, օր դավի փորի մեջն էր, ուսուլով, ձեռի տեղ կար շինած, հանեց ձեռը այնտեղից ու ղշի ոտներեն բռնեց, մեկել ղշերը որ տեսան, թողին ու թռան գնացին։ Վազիրն էլ էդ գուզեր, բռնեց ղշին ու տարավ թագավորին։ Թագավորը

---

[1] Թարգմանությունը պատմողինն է (Ս. Կ.)։

շատ ու շատ ուրախացավ։ Վազիրին մեծ պարգև տվավ, շատ էլ փող ու ճամբեց տուն։ Մնաց մեկ-երեք օր ղուշը քովը, թագավորը կէրթար գուքար ու ինքը իրան կըսեր թե՝ ինչպես է բռնել էս ղուշը վազիրը։ Հանկարծ ղուշը, աստծու հրամանով լեզու ելավ ու ըսավ.— Ես էն օրը բռնվա, որ իմ վազիր-նազիրս փոխեցի, Գյուլ ու Բլբուլի պես, Շհան ու Լաչի պես վազիր-նազիրը փոխեցի ու նրանց տեղը բերի Ղառղառն ու Ղուզղունը, նրանք էլ գլուխս էս օյինը հանեցին, մեկ օր էլ քու գլուխդ էս օյինը կբերե քու նոր վազիրդ։

Թագավորն է հաստատ մտածեց որ. «Իմ բռնածս գործը գործ չէ», նորից բերեց իրան հին վազիրը դրեց տեղը ու էն նոր վազիրին հանեց։ Ղշին էլ բաց թողեց, գնաց։

Էնոնք հասան իրանց մուրազին, դուք էլ հասնեք ձեր մուրազին։